

Արմավիրի մարզի Արաքս համայնքի
ղեկավարի 2014թ. տարեկան
գործունեության հաշվետվություն

Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների
իրավունքների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է համայնքի բնակիչ հանդիսացող 850 անձանց
ընդունելություն և դիմումների քննարկում , որոնցից 805-ին տրվել է
դրական լուծում:

--Կատարվել է համայնքի բնակիչների ընտանեկան նպաստի
համակարգում ընդգրկվելու փաստագրման աշխատանքները:

-- Նոտարական գրասենյակում, Ք Կ Ա Գ - ի բաժնում, անձնագրային
բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում 150 անգամ
միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական
շահերը պաշտպանելու նպատակով:

---Տրվել է 453 տեղեկանքներ:

---Հրավիրել և վարել է համայնքի ավագանու 9 հերթական և արտահերթ
նիստեր.

2014թ տարեկան բյուջեի եկամուտները՝

հողի հարկ նախատեսված 8561.0հազ.դրամից հավաքագրվել
8586.3հազ.դրամ կամ 100.3%

գույքահարկ նախատեսված 1885.0հազ.դրամից հավաքագրվել է
3049.7հազ.դրամ կամ 162%

վարձակալական նախատեսված 300.0 հազ. դրամից հավաքագրվել 363.0 հազ. դրամ կամ 121%

Ընդհանուր տարեկան բյուջեն կատարվել է 110%:

Համայնքի ղեկավարի գործունեությունը պաշտպանության բնագավառում.

--- Աջակցել է պատերազմի վետերանների և զոհված, հաշմանդամ ազատամարտիկների սոցիալական խնդիրների լուծմանը, տրվել է ֆինանսական օգնություններ, կատարվել են մայիսյան տոներին նվիրված միջոցառումներ.

--- Նախապատրաստական աշխատանքներ է տարվել գորակոչի համար, կատարվել է Արմավիրի մարզպետի կողմից ավանդույթ դարձաց գորակոչերին նվիրված միջոցառումները Սարդարապատի հուշահամալիրում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում.

-- Համայնքի ղեկավարը անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի սեփականություն համարվող հողերի, ֆիզիկական անձանց պատկանող հողերի նպատակային օգտագործմանը.

--- Կատարվել է համայնքի սեփականաշնորհված հողերի և շենքերի առաջին պետական գրանցման վկայականների աշխատանքները:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում.

---Կազմակերպել է համայնքի բոլոր փողոցների աղբահանությունը:

---Կատարել է համայնքի խմելու ջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի քլորացման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի գործունեությունը տրանսպորտի, առևտրի և սպասարկման բնագավառում.

---Կազմակերպել է համայնքային ենթակայության 4.5կմ երկարության ճանապարհների երկու կամուրջների պահպանման աշխատանքները:

---Մշակել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:

---Վերահսկողություն է սահմանել չնախատեսված վայրերում և առանց սառնարանային պայմանների՝ հատկապես արագ փչացող սննդամթերքի(կաթնամթերք, կրեմային հրուշակեղեն և այլն) և փափուկ պաղպաղակի բացօթյա վաճառքը: Եռամսյակային ստուգումներ են կատարվել համայնքում գործող առևտրի կետերում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

--Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի դպրոցի երգչախմբի, կարատեի խմբակների գործունեությանը, պարբերաբար օժանդակել է դրամական օգնությունով, մասնավորապես դպրոցում գործող

երգչախմբին մարզային և հանրապետական փառատոններին մասնակցելու համար:

---Համայնքի բնակչության համար կազմակերպվել է համերգ միջոցառում 2 անգամ:

Համայնքի ղեկավարի գործունեությունն առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում.

---Համայնքի ղեկավարը սպորտի բնագավառում կազմակերպել է ֆուտբոլի հրապարակի վերականգնմանը, կայացել է ընկերական ֆուտբոլային հանդիպումներ հարևան գյուղերի թիմերի հետ:

Կատարվել համայնքի 4 բնակչի վիրահատություն պետ.պատվերի շրջանակներում.

---Համայնքում գործում է կարատեի խմբակը:

Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում

---Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի միջոցով կազմակերպել է համայնքի բոլոր տեսակի ցանքատարածությունների, այգիների չափերի վերաբերյալ ամենամյա հաշվետվություն անասնազխաքանակի հաշվառման, անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ:

----Համայնքի բնակիչներին տրվել է սուբսիդավորված ազոտական պարարտանյութ և դիզ.վառելանյութ.

-----Կատարվել է գարնանային ցրտահարության հետ կապված ցուցակների աշխատանքներ և ներկայացվել է մարզպետարան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՁՁ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՄՆԱԽՆՆԻՐՆԵՐ

- Մշակույթի տան և մանկապարտեզի վերանորոգում.
- Ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում.
- Փողոցների լուսավորության վերանորոգում.
- Խորքային հորերի վերականգնում.



Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20 հունվարի 2015թ.